

DAVID MARSHALL LANG, Armeni, un popolo in esilio. La comunità Armena in Italia. Tradotto in italiano da Franchesco Zueneli Calderini, Bologna, 1989, 204 p.

ԴԵՅՎԻԻ ՄԱՐՇԱԼ ԼԵՆԳ, Հայերը՝ տարագիր մի ժողովուրդ: Հավելված՝ Իտալիա հայ համայնքը: Խալիբեհի քարգմանեց Ֆրանչեսկո Զուենելի, Բոլոնիա, Կալդեիների հրատարակչություն, 1989, 204 էջ:

Տարագրությունը իր ներքին էությունը ճակատագրական կրելով է, որով իմաստով տարրային, կրթական արգասաբեր, պատմական օրհասական վիճակներում՝ ոգեբերական: Այդ ամենը առանց երկնադրանքի, համակենցված է հայ իրականության հետ: Այսօր բազմաթիվ հայեր ապրում են Հայաստանի սահմաններից դուրս՝ ցրված աշխարհի բոլոր կրկներում: Դրանով հայը, ըստ մեր կարծիքի, իր երկրի քաղաքացին լինելուց բացի, երկրագնդի քաղաքացի է:

Հայկական դաղթության հետ կապված խնդիրների շուրջ ունեցած մտորումները՝ պատմական հարուստ, երբեմն կղաղի փաստարկներով ճշմարտված, թարգմանաբար իտալացի լեզվով և ներկայացնում անգլիացի արևելագետ Դեյվիդ Մարշալ Լենգի: Հեղինակը՝ Լենգոնի համալսարանի արևելագիտության դպրոցի անդամ, ծանոթ է հայ մտավորականությանը իր «Վրաստանը և Հայաստանը» քաղաքակրթության օրրանն է Զարիզ Բրենի համահեղինակությամբ հրատարակած «Բյուրենների ժողովուրդները» գրքերով: Այս վերջին աշխատությունը ևս նվիրված է հայ և վրաց ժողովուրդների պատմության, մշակույթի, արվեստի ու ճարտարապետության հարցերին:

Գիրքը, որ Դ. Մ. Լենգը ավարտել է 1980-ին (լույս է տեսել Լոնդոնում, 1981 թ.), հրատարակված է բարձր որակով և ճաշկոտվ, շապիկը գեղադարձված է կրկու Մասիսների ու հուսթոնի լուսանկարով, ունի հետևյալ մակագրությունը. «Արարատ լեռ, հայ ժողովրդի հայրենիքի նշանաբանը»: Գրքի Բ-դ գլխում («Սին հույսերը վերնագրով, էջ 34—35») ներկայացված են Վենետիկի Միսթրալանների վանքի անձեռնմխելիությանը վերաբերող նապոլեոնի հրովարտակ, Անդրանիկի, Ֆիդայիների, Վազգեն Տերոյանի, «Վանի դահլիճում», 1909 թ. լուսանկարներ, իտալական «Բի սեկոլո իլլուստրատո» հանդեսում լույս տեսած, Կոստանդնուպոլսում տեղի ունեցած արդու-համիդյան շարժերի գծագրերը, այդ տարիներին Իտալիայում հրատարակված Ուգո Միոնիի «Հայկական ջարդերը գրքից գծագրեր, ինչպես և 1908-ին Քիֆլիսում լույս տեսած «Խաթաբալայից» վերջված գծապատկերների պատճենները: Գիրքը բաղկացած է 14 գլուխներից, վերջում որպես հավելված տեղ է գտել մատենագրական հարուստ ցանկ (էջ 191—196): Հրապարակված է թարգմանյի՝ Յ. Զուենելիի, հարցազրույցը Միսթրալանների միաբան Ռաֆայել Անտոնյանի հետ, ուր շոշափվում են Հայոց պատմության, հայ Առաքելական եկեղեցու, մշակույթի ու գաղթության վերաբերյալ, ինչպես նաև Արցախի Համիդյան ցեղասպանությունից մինչև Մեծ Լեզոնը ներառյալ ոճրագործությունների մասին հարցեր, երևանյան ցույցերից մինչև Լեռնային Ղարաբաղը Հայաստանին միացնելու առնչվող դեպքերը, Սումգայիթի ջարդը, աղետալի երկրաշարժը, սփյուռքի և Հայաստանի միասնականության և միջադպրոցի մակարդակով ներկայացուցիչներ ունենալու խնդիրը (էջ 167—189): Այս նույն թեմաները, առավել մանրամասն, մշակել է Լենգը, քննվող հատորում, աչքի առաջ ունենալով հայ ժողովրդի պատմության վերջին երկու հազար տարվա ժամանակաշրջանը:

Պրոֆեսոր Լենգը հատուկ նշում է այն դերը, որ իթթի-ատականների ղեկավար չրջանակներում ունեցել է Թախաթի մտերիմը՝ Զիյա Գյուլսուֆի: Ձրանսիացի հասարակագետ էմիլ Դուրկհայմի այդ թուրք աշակերտը թրքական ռասիզմի աևարանն էր, հիմնադիրը պանթուրանիզմի և պանիսլամիզմի ու, Լենգի խոսքերով, «իդ վրա է կրում 1915-ի հայկական ցեղասպանության պատասխանատվության մեծագույն մասը» (գլխ. Բ-դ, էջ 15—16): «Պանիսլամիզմի հետևանք պիտի համարել,—նշում է հեղինակը,—Սումգայիթում և Ադրբեջանի այլ քաղաքներում վերջերս տեղի ունեցած հայերի սպանությունները, ինչպես և Ղարաբաղն ու Նախիչևանը Հայաստանից անջատելու, հայ բնակչությունից պարպելու տառնյակ տարիներ համառոտ են հետապնդած քաղաքականությունը» (էջ 16):

Աշխատության Ե-դ գլուխը («Բյուրենների և իսլամի միջև», էջ 44—51) նվիրված է հայկական գաղթությաններին, որոնց կազմավորման պատմությունը սկիզբ է առնում IV դ., երբ Սասանյան արքա Շապուհ Բ-ն, ասպատակելով Հայաստանը, բազմահազար զորիներ է տանում Պարսկաստան, «Ճիշտ այնպես, ինչպես տասներկու դար անց անելու էր Շահ Աբբաս»:

Մեծը»,—դրում է լենգը (էջ 45) ու շարունակում. «Մավրիկիոս կայսրը, որը իշխեց 582-ից մինչև 602-ը, ինքն էլ Զազումով հայ, խորհուրդ տվեց Պարսկաստանի արքայից արքային հալերի տեղահանման ընդհանուր ծրագիր կազմել, որոնք ապրում էին հունա-պարսկական սահմանագծի երկու կողմերում, Մավրիկիոսը թրակիա ուղարկեց Բյուզանդիայի սահմաններում բնակվող հայերին, այդպիսով հիմքը դնելով այսօր Բուլղարիայում գոյություն ունեցող՝ Սոֆիայի, Պլովդիվի, Ռուսեի, Վառնայի և այլ կենտրոնների գաղթօջախներին, Հայ իշխան Կարմիր վարդան Մամիկոնյանը 571-ին հասավ Փոքր Ասիայի Պերգամոն քաղաքը, որ հիմնեց հայերի գաղութ, որտեղ Կ111 դ. ծնվել է հայադե Բարդանեսը՝ ապագա կայսր Բարդանես Ֆիլիպպիկոսը» (էջ 46), Հեղինակը ակնարկում է արաբական տիրապետության շրջանը, Սասանյանների դուռնադնական հերոսավեպի գերմարդկային ուժի տեր, քաջագործ և վեհ հերոսներին, որոնք «սման և նվաղներդան հերոսներին» (էջ 47), Անգլիացի արևելագետ հիշատակում է Սև ծովի ափերի, Սիցիլիայի, Սպարտայի, Կրետե կղզու հայ գաղութները, X դ. հայիկ կաթողիկոսի հիմնադրած թեմերը՝ Անտիոքում, Ասորիքում, Տարսոսում, Կահիրեում հայազգի Բագր ալ-Ջամալին սուլթանը լարձրացնում է գլխավոր վեպիրի աստիճանին, նույն աստիճանին է հասնում Վահրամը՝ Բահրամը, Դ. Մ. լենգը Բյուզանդիայի հայազգի գինվորականների և կայսրերի մասին ակնարկելուց հետո ընդգծում է, որ մոնղոլների արշավանքների տարիներին «հատուկ կարևորություն ունեցան Սյունիք-Աղվանքի հայ թագավորները, որոնք իշխեցին հիշատակում հյուսիս-արևելյան սահմաններում և հարատևեցին սելջուկների նվաճումներից հետո՝ սերունդներ շարունակ, Այս արքայական տոհմից են սերել մելիքները՝ Ղարաբաղի տոհմիկները, որոնք XV11 դ. կարևորագույն դեր ունեցան՝ մեծ քաջությամբ և հնարամտությամբ պահպանելով այն, մինչև որ ուսները XIX դ. գրավեցին Արևելյան Հայաստանը» (էջ 50—51)։

Հեղինակն այնուհետև անդրադառնում է խաչակիրների շրջանում Կիլիկիայի հայ արքաների՝ Ֆրանսիական արշավանքության հետ ունեցած կապերին (գլխ. Զ, ժառանգիրները և կապերը Ֆրանսիայի հետ, էջ 52—61), հայ եկեղեցու և կաթողիկոսների միջև կայացած բանակցություններին, նշում է, որ Ֆրանսիայի արքա Հենրիկ IV-ի ժամանակ Կիլիկիայի հայ առևտրականները Ֆրանսիա և ներմուծել մետաքսի որդը, իսկ ծագումով հայ ժան Ալթենը սկիզբ դրեց Ֆրանսիայի հարավում տորոնի տունիկի մշակմանը, որի հետևանքով մեծ դարձավ դառավ կտավեղենի և ներկերի արտադրությունը, իսկ Ավինյոնում երախտագիտության հուշարձան բարձրացվեց նրա պատվին։ Ենթադրվում է, որ Լուի XIV-ի օրոք Վոլտերի պատմած «երկաթի դիմակով մարդը» հենց ինքը՝ Կոստանդնուպոլսի պատրիարք Ավետիքն է (էջ 55—56), իսկ նապոլեոնի զենքերով Շահինը՝ հայազգի Միր Դավիդը, ժան դը Եուշին և Պիեր Աբրեստիք նմանապես հայեր էին (էջ 56)։ Դարերի ընթացքում մինչև մեր օրերը, հայը Ֆրանսիայի լիարժեք քաղաքացի դարձավ, եղավ մասնակից հյուրընկալ երկրի բարեկեցության ստեղծմանը, նրա մտավորական կյանքին, բայց նաև պարտիզան՝ հիտլերական Գերմանիայի դեմ պայքարում։

Բևեգիայի, Հունդիայի, Մեծ Բրիտանիայի հայերի գաղթօջախների պատմությունը շարադրելուց հետո (էջ 60—61) հեղինակը ամբողջությամբ կենտրոնանում է Պաղեստինի, Պարսկաստանի, Կենտրոնական Ասիայի (մինչև Ֆիլիպիններ)՝ հայերի հիմնած ու միայն միջազգային նշանակության առևտրական հաստատությունների, այլ այդ երկրներում հայերի ծավալած մշակութային, քաղաքական և հասարակական գործունեության վրա (գլխ. է, «Դեպի Արևելք», էջ 62—77)։ Լենգը նշում է նաև, որ հայերը նպաստեցին, որպեսզի եվրոպական երկրներում, արևելագիտությանը՝ գուգահեռ, զարգանա հայագիտությունը։ Հայկական դատը այսօր ևս պարտադրում է իմաստուն որոշումներ կայացնելու խիզախություն, ճիշտ կողմնորոշվելու կարողություն, արդարամտություն, մարդասիրություն, եվ վերջապես, լենգը դրում է (գլխ. Բ. «Արևելյան եվրոպան և կապերը Ռուսաստանի հետ», էջ 88—105)՝ «Հայաստանի հորհրդային Սոցիալիստական Հանրապետությունում արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության և մշակույթի ասպարեզներում տարվող հռանդուն գործունեությունը ցայտուն հակասության մեջ է այն մահաբեր անդորր վիճակի հետ, որ իշխում է պատմական Հայաստանի 90 %-ի վրա՝ թրքական իշխանության օրոք, մի շրջան, որը դիտավորյալ պահպանվում է անապատային վիճակում, բնակիչներից զրկված և լքված, որպես իր նմանների հանդեպ մարդու անգթության խոսող հուշարձան» (էջ 105)։

Նշենք նաև, որ հրատարակիչ Կաղեբրինիի նախաձեռնությամբ իտալերենով լույս ընծայել Դ. Լենգի սույն աշխատությունը, օրինակելի է ու հարկ է պատրաստել այդ գրքի հայերեն և ռուսերեն թարգմանությունները ես։

Ա. Կ. ԶԱՐՅԱՆ

ՃԱՐԱԴԱՐԱԳԵՆԱՎՈՐՄԱՆ ԲԵՒՆԵԾՈՒ